

Հրապարակասուութիւնը այն մեծ ոյժը, աղակին է դարձել մեր պարզա-
մտութեան: Որպէս զի տարագարումը խօսած էր լինինք, մենք մի օրի-
նակով իրար հասկանալու մօտենանք:

Փ. Վարդանեանը թարգմանել է Ընկերի և Աւազակները: Մի գրա-
խօս թարգմանութեան մի քանի կտորներ առաջ բերելով և թարգմանու-
թիւնը թերի համարելով ինքն էլ իւր կողմից նոր թարգմանութիւն է
անում—անկատար կատարելագործելու մօտը: Բայց դ՛վ զարմանալի թիւր-
իմացութիւն: մենք կարող էինք նմանութեամբ խօսել, թէ լուսինը
արեգակի գէմ են բերել և ուզում են հաւատացնել մեզ, թէ այն է իս-
կական արեգակը: Խնդիրը այսպէս անձնական ճաշակի և վերջին ծայրա-
յեղութեան հասնելով բանական հիմունքների իշխանութիւնը դժուարաց-
նում է*): մանաւանդ որ արեգակի լոյսը պէտք է տեսնել և ոչ թէ ազա-
ցուցանել նորա պայծառութիւնը (տես «Մուրճ» մարտի գրախօս):

Ճաշակի այսքան կուպտութիւնը առանց անդրադարձութեան չի անցնում
մեր դպրոցներից, ուստի և մեր ուսուցիչները պէտք է լինին արթուն,
արթուն, և դարձեալ արթուն: Աշակերտները լաւ չեն խօսում,
լաւ չեն գրում, լաւ չեն մտածում, իսկ գրականութիւնը գեղ դարձեալ
համբաւների ձեռքի մէջն է մնում: Եւ դժբախտ դեպքերով և մօտաւ գնի գրքերու

դանաջ, իմաստք մամուլաւորաւոր գնի առաւանդաւորաւոր զգեստ

մագ, Է դառնիք զգեստ ամենամագ ցոյցը զգեստ մագ զգեստ

աւար դոյ զգեստաւոր, իմաստք դառնիք զգեստ մագ զգեստ զգեստ

դոյ զոյ Է իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ մագ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

Է զգեստ իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

Է զգեստ իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

Է զգեստ իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

Է զգեստ իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

Է զգեստ իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

Է զգեստ իմաստք զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

մագ զոյ զգեստաւոր զգեստ մագ զգեստ զգեստ զգեստ

(*) Հասկանալի է, որ այս տեղ մենք կարող էինք Գրախօսի միայն մի մասնաւոր
խնդրի վերա մատնացող անել, եւ թէ ինչու չուէրանք արեգակի մէջ բծեր
եւս փնտաւել: Ս. Մ. ց. գրաւորմանի մասը ալ Է Է գրաւորման մասը մագ

Դառնանք իրկին նորալանքի պատմութեան: Բուպակ իշխանը,
որ ներկայ էր նախալկայի նաւակատեւաց հանդիսին, նուիրեց
նորալանքի երկու եկեղեցիներին և ուսուցիչ Կարապետին և
Սուրբ Նախալկային, իւր սեփական Աղբերիս գիւղը Վայոց ձո-
րսում, իւր սահմաններով, ջրարբի և անջրդի վայրերով: Զաքա-

բէ սպասուարը, Լիպարիտի խնդրանք՝ Ագարակի ձոր գիւղը, որ նորից յափշտակել էին, կրկին վերադարձրեց Նորալանքին:

Նորկառոյց եկեղեցու շինող Լիպարիտ իշխանը զարդարեց եկեղեցին սպասներով, գոյքերով և ժառանգութիւններով: Ապա Սարգիս եպիսկոպոսը մեծամեծ արգիւնք ցոյց տալով եկեղեցուն, գնաց Նրուառդէմ, ուղարկեց այն տեղից Ստեփաննոս Նախալիայի աջը՝ Նորալանքի համար և ինքը այն տեղ ստացաւ մարտիրոսական մահ:

Նորան յաջորդեց նորա քեռորդի Ստեփաննոս եպիսկոպոսն, որ Հայոց Կոստանդին կաթողիկոսի շրջաբերական թղթով նորից հաստատեց Նորալանքի վերայ Վայոց ձորի, ճահուկի և Նախիջևանի գաւառները:

Սորա օրով Լիպարիտի որդի Սմբատ իշխանը շինեց Նախալիայի եկեղեցու առաջ մի ժամատուն սրբատաշ քարերից՝ իբրեւ աղօթարանի տեղ, որ և մինչև մեր օրերը կանգուն մնալով՝ նկարագրուած է նախնիթաց գլխում: Ստեփաննոս եպիսկոպոսին յաջորդեց նորա ազգականն՝ Վահրամ ճգնաւորի որդի Սարգիս եպիսկոպոսը: Սորա օրով Սմբատ իշխանը զարդարեց եկեղեցին աննման սպասներով ոսկուց, արծաթից և պատուական մետաքսից: Նոյնպէս նուիրեց մի քանի գիւղեր, այգիներ և այլն, որոնց ցուցակը կրերեմ ստորեւ:

Տարսայիճ իշխանի հրամանով այս Սարգիս եպիսկոպոսը շինեց Արփայ գիւղի մօտ՝ գետի վերայ մի նշանաւոր կամուրջ, որի տեւրակներն կան և այժմ (գլ. ԺԸ.): Սորա օրով Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը 736—1287 թուին, Սիւնեաց Նահանգի վերայ մետրոպոլիտ ձեռնադրուած, վերադարձաւ Կիլիկիայից և միապետեց երկու թողունները ևս, Նորալանքի և Տաթևի: Սարգիս եպիսկոպոսը Նորալանքում՝ նոր մետրոպոլիտին խոնարհութեամբ հնազանդելով՝ շարունակեց իւր պաշտօնավարութիւնը:

Պատմութիւնը չէ որոշում Սարգիս եպիսկոպոսի մահուան տարին, բայց հաւանական է, որ Սմբատ իշխանի ժամատան վերջին երրորդ կարգի (գլ. ԽԴ.) հարաւածայրի առաջին տապանաքարը դրած լինի նորա գերեզմանի վերայ: Տապանաքարը

կրում է հետեւեալ արձանագրութիւնը: Շիրիմ շնորհալիր Սարգսի է Սիւնեաց եպիսկոպոսի և անյաղթ հռետորի, թվ. ԶԽԷ (ԳԿԷ): Եթէ իսկ նա իմ յիշած Սարգիս եպիսկոպոսն է, ուրիմն նա լախճանուել է 1298 թուին:

Նախավկայի տաճարը կառուցանելուց յետոյ Նորավանքը գործաւ արդէն տոհմական դամբարան այդ կողմերում իշխող Սրբելեանց նշանաւոր տոհմի համար, որոյ հանգուցեալ անդամները ամփոփուում էին այդ տեղ, մինչև անգամ հռետոր տեղերում մեռնողները բերում թաղում էին Նորավանքում: Այս հանգամանքը եպիսկոպոսական աթոռի հետ առաւել ևս բարձրացնում և հռչակում էր Նորավանքի անունը: Նախավկայի տաճարից յետոյ մինը միւսի յետևից շինուեցին Սմբատ իշխանի ժամատունը, Տնորայիճի տապանատունը և Բուրթել իշխանի չքնաղ տաճարը: Այս և Ստեփաննոս Բագրատունի Սոցա հետ միասին Նորավանքը հարստացաւ անշարժ կալուածքներով և զանազան նուէրներով, որպիսի հարստութիւն ոչ մի մենաստան Վայոց ձորում չէ ունեցել: Հարստութեան քանակութեամբ ևս կարելի է բացատրել Նորավանքի բարձր նշանակութիւնը Սիւնեաց իշխանների, հոգևորականների, ազատների և ժողովրդի աչքում:

Կրօնական եւանդով ոգևորուած՝ նուիրատուները իւրեանց հոգեկան մխիթարութիւնը գտնում էին այս և այն մենաստանին մատուցած նուիրատութեան մէջ: Աւպատերի վերայ փորագրած արձանագրութիւններով եկեղեցիւ պաշտօնեաները պարտաւորում էին յիշել որոշ օրերում իւրեանց աղօթքի մէջ նուիրատուին և կամ նորա ազգականներին: Արձանագրութիւնները մեծ տեղ էին բռնում այն ժամանակի կեանքի պայմանների մէջ և առանց նորանց մենք այժմ գրկուած կլինէինք հնութիւնների կէս պատմութիւնից:

Այն ժամանակի քաղաքական անապահով դրութիւնը երկրի պատճառ էր լինում սեփականութեանց յափշտակութեան, օստոի նուիրատուն ոչ մի գիմադրող բոժ չունենալով դիմում էր իւր արձանագրութեան մէջ անվերջ անէծքների նալլաթնե-

րի և ապիզարների, Անէծքի հաւատարապէս դիմում էին և իշխանները, և հոգեւորականները և հասարակները: Օրբելեան եպիսկոպոսը, 1294 թուին, մի արձանագրութեան մէջ հաղար տարով մի անէծք է դրել, որ այսուհետեւ ևս երբեք հարիւր տարի պէտք է շարունակուի նորա ոյժը:

Ձնայելով այդ անէծքներին, կալուածները, ինչպէս տեսնում ենք Նորավանքի պատմութիւնից, շատ յաճախակի յափշտակւում էին և նորից վերադարձւում էին մենապտանին: Նորավանքի կալուածքները, ինչպէս երևում է Օրբելեանի պատմութիւնից և վանքի պատերի վերայ մեզ հասած արձանագրութիւններից, ձեռք են բերուել կամ իշխանաց հրամանով կամ նուիրատուութեամբ: Այդ շրջանը տեղ է սկսած Յովհաննէս եպիսկոպոս Կապանեցուց (1105 թ.) մինչև Յովհաննէս եպիսկոպոս (մետրոպոլիտ) Օրբելեան (1312 թ.), մօտ երբեք հարիւր տարու ընթացքում:

Հետաքրքրութիւնից զուրկ չպէտք է լինի եթէ ժամանակագրական կարգով յիշատակեմ այս տեղ Նորավանքի բոլոր կալուածաց ցուցակը, ցոյց տալով թէ այժմ ում են պատկանում այդ կալուածները, միայն թէ որոշ լինի նորանց ներկայ աշխարհագրական տեղը և սահմանը:

1. Յովհաննէս եպիսկոպոս Կապանեցին, 1105 թուին, պարսից Մահմուտ Սուլթանի հրամանով տիրեց Նորավանքի սուրբ Կարապետի մենաստանը իւր շրջակայ վայրով, այժմեան Ամաղուի ձորով: Այժմ Նորավանքի բոլոր աւերակները և ձորը հողատիրական իրաւունքով պատկանում են Ամաղու գիւղի հետ միասին, երևանցի Ստեփաննոս Եղիազարեանցին:

2. Նոյն եպիսկոպոսը նոյն ժամանակամիջոցում հոգ է առնում սահմանակից գիւղացիներից — Գանձակեցիներից և Տրխարեցիներից — յօգուտ մենաստանին: Գանձակն այժմ աւերակ է, Նորավանքից դէպի հիւսիս և պատկանում է պետութեանը: Իսկ Տրխարը գիւղը Նորավանքի դէմի հարաւակողմի ժայռի գլխին, որ այժմ յայտնի է Հին Ամաղու անունով, և աւերակ է, պատկանում է վերոյիշեալ Եղիազարեանցին:

3. Նոյն եպիսկոպոսի աշխատութեամբ պարսից սուլթանը շր-
նորհում է Նորավանքին Հրաշկաբերգը, բայց Վրաց Թամար
թագուհու աշխարհակալութեան ժամանակ իվանէ Աթաբէգը
այդ բերդը, Վայց ձորի գաւառով հանդերձ, շնորհեց իշխան
Լիպարիտ Օրբելեանին: Բերդն իւր ամբողջ շջակայքով պատկա-
նում է Ձուայ գիւղի բնակիչ Հասանալի Սուլթանին:

4. Նոյն Յովհաննէս եպիսկոպոսի խնդրանքը՝ պարսից Մահ-
մուտ սուլթանի մայրը շնորհում է Նորավանքին Անապատ բեր-
դը, նորա տասներկու ագարակներով, եթէ ներկայումս անյայտ
Անապատ բերդը, ըստ իմ լիբրոյի շեալ ենթադրութեան, կոնգ-
նած էր կամ Երթիչ գիւղի կամ: Խառնել հաւանական, Ագետր
գիւղի մօտ, ուրեմն նա իւր ագարակներով պատկանում է պե-
տական գանձարանին:

5. Տէր Ստեփաննոսի (Փախրըմսէհ) խնդրանքը Պարսից ա-
թաբէգ Ելակուզը, 1267 թուին շնորհում է Նորավանքին
Ագարակի ձոր գիւղը հողով, քրով, այգիով, ագարակով և
նոյն իսկ Անապատ բերդով: Բայց որովհետև սորան վանքից
յափշաակել էին, ուստի Վրաց տիրապետութեան օրով, Լի-
պարիտ Օրբելեանի խնդրանքը, Զաքարէ Սպասալարը նորից վե-
րադարձրեց վանքին: Այժմ՝ յիշեալ գիւղը պատկանում է պե-
տական գանձարանին:

6. Բուսլակ իշխանը՝ Աթաբէգ Իվանէի գործակալը, 1223
թուին ներկայ լինելով Նախովկայի եկեղեցու նաւակատեաց
հանգիսին նուիրեց այդ եկեղեցւոյն և սուրբ Կարապետին Աղ-
բերիս գիւղը իւր սահմաններով, քարերի և անջրգի վայրերով,
որ գտնուում էր Ռարալագեազի այժմեան ենգիջայ և աւերակ
Գանձակի միջում, այժմ՝ բոլորովին անյայտ, բայց տեղը պատ-
կանում է պետական գանձարանին:

7. Լիպարիտ Օրբելեանը 1223 թուին նուիրում է Նախովկ-
այի տաճարին Տխարը գիւղն իւր ամէն սահմաններով: Ինչ-
պէս վերը յիշեցի այժմ անյայտ այդ գիւղը ներկայ տւերակ
Հին Ամաղուն է, աւերակ, որ պատկանում է Ստեփաննոս
նղիագրեանցին:

8. Նոյն Լիպարիտ իշխանը նոյն եկեղեցուն նուիրում է Համասրի գիւղում մի թաղ, Այժմ Համասրի գիւղն անյայտ է բոլորովին:

9. Ոմն Շատղոյս, 1256 թուին, նուիրում է իւր ձեռատունկ այգին, առանց որոշելու գիւղի կամ տեղի անունը:

10. Ոմն Հաղարի և իւր ամուսին Մելիքն ընծայում են մի տուն և մի այգի Զվայ գիւղում: Նոյնանուն գիւղն այժմ պատկանում է նոյն գիւղաբնակ Հասանալի Սուլթանին: Վերջին երկու (9 և 10) նուէրները գրուած են Սմբատի ժամատան հարաւային պատի վերայ ներքուստ:

11. Սմբատ իշխան Օրբելեանը, 1261 թուին ընծայել է Աւէշ և Անապատ գիւղերը և մի նորատունկ մեծ այգի, իւր կիւրակըրաջրով, Ակուռի գիւղում: Առաջին գիւղն, այժմ Հաւէշ, մեծ մասամբ պատկանում է իբրեւ սեփականութիւն իւր բնակիչ ռամիկներին, իսկ փոքր մասն՝ Եայիջեցի բէգերին (գլ. ԽԲ.) Անապատ գիւղն անյայտ է, իսկ Ակուռի, այժմ Ախուռի, պատկանում է Եայիջեցի բէգերին:

12. Նոյն Սմբատը նուիրել է իւր Ազատ գիւղը շրջակայ լեռներով և գաշտերով և բոլոր սահմաններով: Այս գիւղն այժմ չկայ, անյայտ է և անունը: Բայց նա գրած էր, կամ այժմեան Խաչիկ գիւղի տեղը կամ ոտրա մաս: Տեղը ներկայումս պատկանում է պետական գանձարանին:

13. Նոյն Սմբատը նուիրիլ է մի մի այգի՝ Զուայ և Հոդոցիմ և Ծաղկաձոր գիւղերում: Առաջին գիւղը պատկանում է նոյն գիւղացի Հասանալի Սուլթանին, երկրորդն, որ այժմեան Եայիջի գիւղն է, պատկանում է, իբրեւ սեփականութիւն, իւր ռամիկ բնակիչներին: Երրորդն անյայտ է: Գուցէ Դարաչիչազն է:

14. Նոյն Սմբատը նուիրել է Գինէշիկաձորն, ինչպէս ցոյց է տալի ժամատան արեւմտեան դրան մօտի արձանագրութիւնը: Գինէշիկ, այժմ Կնիշիկ հայաբնակ գիւղ՝ պատկանում է Զուացի Հասանալի Սուլթանին:

15. Նոյն Սմբատն ընծայել է այգիներ Ակուռի, Արիայ և Ա-

մաղուածոր գիւղերում: Առաջինն այժմ Ախուրի, պատկա-
նում է Եայիջու բէգերին: Երկրորդն—Չուացի Հասանալի
Սուլթանին և երրորդը նոյն անունով սեփականութիւն է Երե-
անցի Ստեփաննոս Եղիազարեանցին: 1281 թվականին Թ.

16. Մահաւան անուն իշխանը նստիւր է իւր սեփական նըր-
բոյն բերդն իւր ունդաւանով: Նրբոյն այժմ Ելգին Հայաբնակ
գիւղ, իսկ բերդն այժմ Ելէշապէ, երկուսն ևս սեփականու-
թիւն են պետական գանձարանի: 1281 թվականին Թ.

17. Նոյն Մահաւանը նստիւր է մի տուն (և մի այգի) Աւփայ
գիւղում: Վերջինս սեփականութիւն է Չուացի Հասանալի
Սուլթանի: 1281 թվականին Թ.

18. Ախթամարեան, որ բնակւում էր Աւփայ գիւղում, նու-
րել է իւր այգին նոյն գիւղում: Այժմ, ինչպէս յիշեցի, գիւղը
պատկանում է Հասանալի Սուլթանին: 1281 թվականին Թ.

19. Նորո եղբորորդին, Ամիրայ Ախթամարեան, նստիւր է
նոյն Աւփայում մի այգի (1291 թվին) որը գնել էր Տարսայիճ
իշխանից 4000 դրամով: 1291 թվականին Թ.

20. Ստեփաննոս Եպիսկոպոս Օրբելեանը 2500 դրամով գնում
է Աւփայում Ժակոպայի այգին նոյն նորավանդին ուղէր: 1291 թվականին Թ.

21. Ուրիշները տուել են Աւփայում Պամբախելի մօտ մի
այգի, երկու աչք ջրաղաց կամրջի մօտ և մի այգի Ելգին:

22. Տարսայիճի ամուսին Մինայ խաթունն և իւր որդի Ջա-
լալը, 1291 թվին, նստիւր են երկու այգի մինը Ալէրի գիւ-
ղում, միւրը Կորգոյում: Վերջին այգեպեղի տարածութիւնը
տասներկու գլխ էր: Առաջին գիւղն, Երեւանի գաւառում,
այժմ սեփականութիւն է պետական գանձարանի: իսկ երկրոր-
դը անյայտ: 1291 թվականին Թ.

23. Ստեփաննոս Եպիսկոպոս Օրբելեան գնել է իւր եղբայր
Ջալալից, Չուայ գիւղը 21,000 դրամով: Վերջի ամէն Եւհ-
մաններով, հաղով, ջրով և այգեպտաններով և բոլոր բնակիչե-
րով ամէն հարկերից ազատ, նստիւր է Եղիաշխանի: Թուայ
գիւղն, ինչպէս վերը մի քանի անգամ յիշուած է, ամբողջ-
ովն սպտականում է մուշքաբաղաւ իրաւունքով իւր բնակիչ

Հասանալի Սուլթանին:

24. Տարսայիճ իշխանը կառուցանելով իւր եղբօր Սմբատի գերեզմանի վերայ դամբարան, յատկացրել է վերջինին Հալէձոր գիւղի տարեկան հորկը խաւսակալի, Հալէձորն Արցախի սահմանումն է, ուստի չգիտեմ ում սեփականութիւն է:

25. Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը նուիրել է Կոստըր Սահակ փողահանը ում Աբասաշէն գիւղը: Վերջին գիւղն և տեղն այժմ անյայտ են: Իսկ փողահանը այժմեան Գիւմրի շրջանայ գիւղն է, որ պատկանում է պետութեանը:

26. Նոյնը նուիրել է իւր հայրենաբաժնից Հրասեկայ բերդի Խրիստէսէլեանին իւր սահմաններով: Բերդն իւր սահմաններով պատկանում է Ձուլալի Հասանալի Սուլթանին:

27. Նոյն սրբազանը նուիրել է Նորավանքին Արատես գիւղն իւր շրջակայ սահմաններով և վանքով: Գիւղն, որ այժմ կոչւում է Այսասի (գլ. 15) սեփականութիւն է պետական գանձարանին:

28. Նոյնը նուիրել է Քարկոփը բոլոր սահմաններով, որ և պատկանում է պետութեանը:

29. Ոմն Տանկրադուէի որդի Սանջար 1303 թուին նուիրել է Տանձիկ գիւղն իւր սահմաններով: Նոյնանուն գիւղն այժմ պատկանում է Հասանալի Սուլթանին:

30. Նոյն Սանջարը նուիրել է Լմի այգի նոյն գիւղում:

31. Իսկեհնց Գրիգոր իշխանը 1312 թուին, գնել և նուիրել է երկու այգի Դայեկոյ Խաչի մօտ Առվայրում, որ գնուած էին 1500 սպիտակով:

32. Խալաշահի դուստր Խաթունը 300 սպիտակով գնել է Առվայրում մի այգի և նուիրել է նոյն Նորավանքի մեծատանին:

33. Խոսրովիկի դուստր Գնեգէն նուիրել է 1294 թուին Խա. Տանկահի այգին. այժմ անյայտ տեղ:

34. Ալիաթլան Մխիթար քահանայ նուիրել է մի այգի Առվայ գիւղում, Դայեկոյ քարի մօտ:

Տասնևհորս երրորդ դարու սկզբից (1312 թ.) յետոյ ինչ

նուէրներ են եղած մենաստանին՝ յայտնի չէ՝ միայն պարտից Ֆատալի շահի օրով Ամադու գիւղը Պետրոս բէգ Օրբելեանի սեփականութիւնն էր մենաստանով հանդերձ և բոլոր եկամուտը յատկացուած էր Նորավանքի մենաստանին։ Այժմ այդ գիւղն և մենաստանի աւերակները պատկանում են ինչպէս յերը յիշեցինք, Երեւանաբնակ Ստեփաննոս Եղիազարեանցի ժառանգներին։

Ի բաց առած այս վերջին գիւղը որ նուիրուած է՝ միշտ մօտիկ ժամանակներում, Նորավանքի մենաստանը, ինչպէս երևում է նորա պատմութեան և արձանագրութեանց մեղուանդած կալուածների վերոյիշեալ ցուցակից, ունեցել է ԺԲ և ԺԳ դարերում Գրառներէ գիւղի Գրառներէ այգիի վէջ հողաբաժին, Երևանուն, մի ջրաղաց երկու ալքով, գիւղի Դ Խաչ և մի քարահանք։ Իւր ժամանակին սոքա կազմում էին պատկառելի հարստութիւն։

Վանքապատկան գիւղերը մենաստանի հետ ինչպիսի յարաբերութիւն ունէին, բերքերի քանի մասն էին յատկացնում եկեղեցուն և հետևաբար Նորավանքի մենաստանի տարեկան կալուածական մուտքն զրպիսի քանակութիւն էր կազմում։ Պարտից պետական կանոններին համաձայն և այժմ Ռուսաց օրէնքով վերահաստատուած իրաւանց հիման վերայ մուլքաբարը (կալուածատէր) իւր մուլքի մէջ բնակուող գիւղացիներից ստանում է ամէն տեսակ հողային բերքերի տարեկան 10% երեւանեցի (1/30) մասն կամ տասանորդից փոքր ինչ աւելի։ Արդեօք նոյն էր տուրքերի քանակութիւնն և ԺԲ և ԺԳ դարերում։

Մենաստանի կալուածոց մէջ բնակուող ժողովուրդը, բացի իւր աշխատանաց մի մաս յատկացնելուց յօգուտ եկեղեցու կրօն էր արդեօք որ և է պարտականութիւն, Դարալագեազի վանքերի բոլոր արձանագրութեանց մէջ, ինչպէս յիշել եմ եւս գիտում, միայն երկու գիւղի մասին է ասուում թէ նուիրեցի եւս ժողովրդով (Ձալօշ գիւղն) կամ այգեհարան և Բուր Բնակչէ (Ձուայ գիւղն, որ Ստեփաննոս Եպիսկոպոս Օրբելեանը բնծայեց

Նորավանքի եկեղեցուն), մնացեալ արձանագրութեանց մէջ ժողովրդի մասին ամենեւին չէ յիշուած:

Նորավանքի մենաստանը՝ բոցի վերին սոսած անշարժ կալուածներն, անշուշտ՝ կուէնեար և այլ շատ այգալիսիներն, որոնք չեն եղել յիշատակուած որ և է տեղւորեմն բոլորը միասին, անշուշտ, կկազմէին նշանուոր եկամուտ: Մենաստանն իբրև ուխտատեղի՝ կուէնեար և մասնաւոր մօտք՝ հոգեւոր: Իբրև նախաթու՝ կուէնեար օգուտ և թեմից, չէ որ նորան էին պատկանում՝ վայոյ՝ ձոր, ճահուկ և նախիջեան գաւառները:

Իբրև նախաթու, իբրև հարուստ մենաստան, Նորավանքը կուէնեար և բազմաթիւ միտքանութիւն, որի ապրուստը պակաս ծախս չէր կէանի: Այստեղ որ միասնաց թուի, եկամտից և ծախուց մերձաւոր քանակութեանց մասին ոչ մի տեղեկութիւն չկայ: Բայց այսքանը յայտնի է՝ որ այն դարերում շատ հեշտ էր բազմաթիւ կրօնականներ ժողովել: Օրինակ՝ ոմն Վահան, կրօնաւոր դառնալով, մենաստան շինեց, Բաղաբերդի մօտ, ուր և ժողովեց աւելի քան հարիւր սրբապետ եղբայրներ*): Կամ՝ ծաթեի վանքում, 906 թուականին, կային հինգ հարիւրէ չափ կրօնաւոր, երաշտոտական երգերի բազմաթիւ փիլիսոփաներ, գրողների և նկարչութեան արհեստագործներ, ճախ էր և վարդապետական կրթութեան վարժարանը, պնդում է Սոհրվանդոս Եպիսկոպոս (Օրբելեանը*):

Սորանով չէ վերջանում Նորավանքի պատմութիւնը: Սոհրվանդոս եպիսկոպոս Օրբելեանից մինչև մեր օրերը թէ՛ ինչ վիճակի է եմթարկւում այդ սրբավայրը, մենք կտեսնենք հետեւեալ գլխում:

(Շարունակել)

ԲԱԶԵՐՈՒՆԻ

*) Օրբել. Պատմ. Նահ. Սիս. գլ. ԽԱ. և ԽԵ.